

ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆՆԵՐԻ ՍՆՆՊԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցը տրամադրում է շաքարային դիաբետ ունեցող երեխաների և դեռահասների սննդակարգի վերաբերյալ արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել շաքարային դիաբետ ունեցող երեխաների և դեռահասների կյանքի որակը:

Մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Մանկական Էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել երեխաների և Դեռահասների Դիաբետի Միջազգային Միության կողմից (International Society for Pediatric and Adolescent Diabetes, ISPAD) 2014թ. հրատարակված «Շաքարային դիաբետ ունեցող երեխաների և դեռահասների սննդակարգի կարգավորումը» (ISPAD Clinical Practice Consensus Guidelines 2014 Compendium, Nutritional management in children and adolescents with diabetes) կլինիկական ուղեցույցը, ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Ամերիկյան Դիաբետի Ասոցիացիայի (American Diabetes Association, ADA) կողմից ցուցումների որոնման, ուսումնասիրման և գնահատման համակարգի (GRADE) ձևափոխված տարբերակ (տես՝ Հավելված 1.): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Մանկական Էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի կողմից: Ուղեցույցը նախատեսված է մանկական էնդոկրինոլոգների, մեծահասակների էնդոկրինոլոգների, մանկաբույժների, թերապևտների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա ուղեցույցում լուսաբանվել են շաքարային դիաբետ ունեցող երեխաների և դեռահասների սննդակարգի կարգավորման սկզբունքները:

Առանձնակի կարևորվել է յուրաքանչյուր երեխայի մշակութային, էթնիկական և ընտանեկան ավանդույթներին սննդակարգի վերաբերյալ խորհուրդների հարմարեցումը և աշխատանքային թիմում փորձառու մանկաբույժ-դիետոլոգի ներգրավումը: Ընդհանուր առմամբ ձևակերպվել է 15 խորհուրդ, որոնցից 2-ի հիմքում ընկած են A որակի ապացույցներ:

Հեղուկություններ

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբ եկել է համաձայնության դիաբետ ունեցող երեխաների և դեռահասների սննդակարգի կարգավորման սկզբունքային հարցերի վերաբերյալ:

Բանալի բառեր

ապացուցողական բժշկություն, կոնսենսուս, շաքարային դիաբետ, ուղեցույց, սննդակարգ, գնահատում, սնուցիչներ

Պատասխանատու համակարգող

Աղաջանովա Ե.Մ, բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի վարիչ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիական կլինիկայի ղեկավար, ՀՀ ԱՆ գլխավոր մանկական էնդոկրինոլոգ

Աշխատանքային խմբի անդամներ

- Լ.Գ. Քալանթարյան, ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դասախոս, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Գ.Մ.Բայբուրդյան- ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դասախոս, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Ռ.Լ.Մարկոսյան- բ.գ.թ., ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Լ.Վ.Նավասարդյան-բ.գ.թ., ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Ն.Հ. Զոհրաբյան- ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի ասիստենտ

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները շահերի բախում չեն նշում: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները չեն ֆինանսավորվել:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին, հատկապես՝ բժիշկ- ներգատաբան Քնարիկ Ներսեսյանին թարգմանչական աշխատանքներին մասնակցելու համար:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:

Բովանդակություն

Ներածություն

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սննդակարգի կարգավորման նպատակները

Էներգիայի բալանսի, էներգիայի ընդունման և սննդի բաղադրամասերի վերաբերյալ ուղեցույց

Սննդի բաղադրիչները

Սննդակարգի պլանավորման և ուսուցանման ուղեցույց

Ածխաջրերի հաշվարկը

Գլիկեմիկ ինդեքս (GI) և գլիկեմիկ ծանրաբեռնվածություն(GL)

Սննդակարգային խորհուրդները ինուլինոթերապիայի որոշակի ռեժիմների դեպքում

Խորհուրդներ ըստ տարիքային խմբերի

Սննդակարգի փոփոխությունները սպորտի և ֆիզիկական ակտիվության ժամանակ

Տիպ 2 շաքարային դիաբետ ունեցող երեխաների և երիտասարդների սննդակարգի կառավարումը

Սննդային վարքագծի խանգարումները և դիաբետը

Վարքագծային մոտեցումները դիաբետի սննդակարգի ուսուցման հարցում

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված 1. Ապացույցների դասակարգման համալիր

Հավելված 2. Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Հապավումներ

ISPAD (International Society for Pediatric and Adolescent Diabetes)՝ Երեխաների և Դեռահասների Դիաբետի Միջազգային Միություն

HbA1C- գլիկոզիլացված հեմոգլոբին

ՄՁԻ- մարմնի զանգվածի ինդեքս

ՄՉՃԹ - մոնո-չհագեցած ճարպաթթուներ

ՊՉՃԹ- պոլի-չհագեցած ճարպաթթուներ

ICRs-ինսուլին-ածխաջրային գործակից

GI- գլիկեմիկ ինդեքս (GI)

ԻԱԲՆ- ինսուլինի ամենօրյա բազմակի ներարկումների թերապիա

Ներածություն

Սննդակարգի կարգավորումը դիաբետի բուժման և իրազեկման հիմնաքարերից է: Տարբեր երկրների և տարածաշրջանների մշակույթային և սոցիալ-էթնիկական իրադրությունը ազդում է սննդակարգային սովորությունների ձևավորման վրա: Թեև կուտակվել են երիտասարդների սննդային պահանջների վերաբերյալ լուրջ գիտական ապացույցներ, վերջիններիս հիման վրա դիաբետի ժամանակ սննդակարգի

կարգավորման շատ ասպեկտներ դեռևս բեղմնավորման փուլում են գտնվում, և այդ առումով կարևոր է անհատականացնել սննդակարգային խորհուրդներն ու սննդի ընդունման պլանը:

Սույն կոնսենսուսային ուղեցույցը արտացոլում է ազգային և միջազգային մանկաբուժական մոտեցումները/ կոնսենսուսային համաձայնագրերը [1-3], ինչպես նաև դիաբետ ունեցող մեծահասակների համար նախատեսված խորհուրդների հիման վրա կատարված եզրակացությունները [4-6]: Պահանջվում են լրացուցիչ հետազոտություններ մանկական դիաբետի կառավարման և ուսուցման տարբեր ոլորտների վերաբերյալ՝ մասնավորապես էֆեկտիվ սննդակարգայի միջամտությունների և հեռահար հետևանքների վերաբերյալ:

Շաքարային դիաբետ ունեցող երեխաների սննդակարգային խորհուրդները հիմնվում են առողջ սննդակարգային խորհուրդների վրա, որոնք նախատեսված են բոլոր երեխաների և մեծահասակների համար [2,3] և համապատասխանաբար՝ ողջ ընտանիքի: Սննդակարգի վերաբերյալ խորհուրդները պետք է հարմարեցվեն յուրաքանչյուր երեխայի մշակութային, էթնիկական և ընտանեկան ավանդույթներին, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական պահանջներին: Նույն կերպով ինսուլինային ռեժիմն ընտրելիս պետք է հաշվի առնել երեխայի սննդակարգային սովորություններն ու կենսակերպը:

Շաքարային դիաբետ ունեցող երեխաների հետ աշխատանքի փորձ ունեցող մանկաբույժ-դիետոլոգը պետք է մանկական դիաբետի բուժման միջոցի սցիպլինար թիմի մաս կազմի, որպեսզի իրազեկի և աջակցի երեխային, ծնողներին, խնամողներին, ընտանիքի այլ անդամներին, ինչպես նաև բուժանձնակազմին, դպրոցի ուսուցիչներին և դայակներին: Սննդի ընդունման կանոնավոր հաճախականությունը և ընտանեկան ավանդույթները, երբ երեխան նստում է ընտանիքի մյուս անդամների հետ ճաշելու, օգնում են ձևավորել ճիշտ սննդային սովորություններ և լավացնում են գլիկեմիայի վերահսկողությունը [7-9]:

Դիետոթերապիան շաքարային դիաբետի բուժման մյուս բաղադրիչների հետ համատեղ բարելավում է կլինիկական և մետաբոլիկ ցուցանիշները [10, 11]: Բժիշկ-դիետոլոգը կարող է խորհուրդներ տալ սննդակարգի պլանավորման, սննդի բաղադրության, հիմնական ու լրացուցիչ սննդի ընդունումների ժամանակացույցի հետ կապված՝ ելնելով յուրաքանչյուր երեխայի անհատական իրադրությունից, կենսակերպից և

ինսուլինի ազդեցության պրոֆիլներից: Կարևոր է ողջ ընտանիքի ներգրավումը առողջ սննդակարգի սկզբունքների հիման վրա անհրաժեշտ փոփոխություններ կատարելու գործընթացում: Պետք չէ թերագնահատել դիաբետի ազդեցությունը սննդային վարքի վրա, որը կարող է առաջացնել սննդի ընդունման հետ կապված հոգեբանական դիսկոմֆորտ: Հետևաբար դիետայի և կենսակերպի փոփոխությունները պետք է կատարվեն փորձառու մասնագետների հսկողության տակ: Ուսուցումը պետք է ներառի սննդային վարքի փոփոխության մոտեցումներ, մոտիվացիոն հարցազրույցների անցկացում և/կամ խորհրդատվություն: Ուսուցման մոտեցումները հարկ է պարբերաբար վերանայել, որպեսզի դրանք համապատասխանեն աճող երեխայի անընդհատ փոփոխվող կարիքներին և պահանջներին: Առավելագույն արդյունավետության համար դիետոլոգից պահանջվում է երեխայի ընտանիքի հետ կառուցել վստահելի և կայուն հարաբերություններ [12, 13], ինչպես նաև ունենալ մասնագետների միջդիսցիպլինար թիմի անդամների հետ ընդհանուր հստակ նպատակներ [14]:

Ուսուցումը կարող է անցկացվել ինչպես երեխայի և նրա ընտանիքի, այնպես էլ մարդկանց ոչ մեծ խմբերի համար:

Տվյալ խորհուրդները ուղղված են առողջ սննդակարգի սահմանման, օպտիմալ գլիկեմիկ վերահսկողության, սիրտանոթային ռիսկերի նվազեցման, հոգեբանական կոմֆորտի և դրական ընտանեկան միջավայրի պահպանմանը:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Մանկական Էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2000–2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն,

ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Երեխաների և Դեռահասների Դիաբետի Միջազգային Միության կողմից (International Society for Pediatric and Adolescent Diabetes, ISPAD) 2014թ. հրատարակված «Շաքարային դիաբետ ունեցող երեխաների և դեռահասների սննդակարգի կարգավորումը» (ISPAD Clinical Practice Consensus Guidelines 2014 Compendium, Nutritional management in children and adolescents with diabetes) կլինիկական ուղեցույցը, ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Ամերիկյան Դիաբետի Ասոցիացիայի (American Diabetes Association, ADA) կողմից ցուցումների որոնման, ուսումնասիրման և գնահատման համակարգի (GRADE) ձևափոխված տարբերակ (տես՝ Հավելված 1.): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Մանկական էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի կողմից: Ուղեցույցը նախատեսված է մանկական էնդոկրինոլոգների, մեծահասակների էնդոկրինոլոգների, մանկաբույժների, թերապևտների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Սննդակարգի կարգավորման նպատակները

- խրախուսել ճիշտ սննդային վարքագիծ և առողջ սնվելու կայուն սովորություն՝ պահպանելով սոցիալական, մշակութային և հոգեբանական հարմարավետություն:
- Օրական տարբեր բաղադրության, բալանսավորված սննդի երեք ընդունումը, օգտակար և թեթև սննդի հավելումով (եթե անհրաժեշտ է), կապահովեն բոլոր անհրաժեշտ

անուցիչներով, կնպաստեն մարմնի առողջ զանգվածի պահպանմանը, կկանխարգելեն շատակերությունը և կնպաստեն գլիկեմիայի վերահսկողությանը:

- Ապահովել էներգիայի և սննդանյութերի ընդունման բավարար մակարդակ՝ օպտիմալ աճի, զարգացման և լավ առողջության համար:
- Հասնել անհրաժեշտ մարմնի զանգվածի ինդեքսի (ՄՁԻ), իրանի շրջագծի և պահպանել այն: Երեխաներին և երիտասարդներին խորհուրդ է տրվում կանոնավոր ֆիզիկական ակտիվություն:
- Օպտիմալ գլիկեմիկ վերահսկողության համար անհրաժեշտ է հասնել հավասարակշռության ընդունվող սննդի, մետաբոլիկ կարիքների, էներգիայի ծախսի և ինսուլինի ազդեցության պրոֆիլների միջև:
- Կանխարգելել և բուժել դիաբետի սուր բարդությունները ինչպիսիք են հիպոգլիկեմիան, հիպերգլիկեմիայի էպիզոդները, հիվանդությունները և ֆիզիկական վարժությունների հետ կապված խնդիրները:
- Նվազեցնել միկրո - և մակրոանգիոպաթիայի ռիսկը:
- Պահպանել կյանքի որակը:
- Կառուցել աջակցող հարաբերություններ վարքային և սննդակարգային փոփոխություններն իրականացնելու համար:

Էներգիայի բալանսի, էներգիայի ընդունման և սննդի բաղադրամասերի վերաբերյալ ուղեցույց

Էներգիայի բալանս

Ախտորոշման պահին ախորժակը և էներգիայի ընդունումը հաճախ բարձրացած են լինում, ինչը ուղղված է մարմնի քաշի կատաբոլիկ կորստի վերականգնմանը: Անհրաժեշտ զանգվածի վերականգնումից հետո էներգիայի ընդունումը պետք է նվազեցնել [15]: Մասնագետների խումբը ախտորոշումից հետո առաջիկա 6 շաբաթների ընթացքում պետք է գնահատի անհրաժեշտ քաշի ավելացումը [16]:

- Էներգիայի ընդունման մակարդակը խիստ տարբերվում է տարբեր անձանց մոտ օրից օր՝ կախված տարիքից, աճի արագությունից, ֆիզիկական ակտիվությունից և շրջակա

միջավայրի այլ կարևոր գործոններից, ինչպիսիք են սննդի տեսակը և հասանելիությունը:

- Ընդունված էներգիան պետք է բավարար լինի օպտիմալ աճ ապահովելու և մարմնի իդեալական քաշը պահպանելու համար:
- Փոխվող էներգետիկ կարիքների բավարարման համար անհրաժեշտ սննդի քանակի մասին խորհուրդները պետք է լինեն բավական ճկուն:
- Սննդակարգի պլանավորման մասին խորհուրդները պետք է մշտապես վերանայվեն, որպեսզի համապատասխանեցվեն ախորժակի և ինսուլինային ռեժիմի փոփոխություններին, ինչպես նաև օպտիմալ աճ ապահովեն [17]:
- Ինսուլինը (դրա քանակը և տեսակը) հնարավորության դեպքում պետք է հարմարեցնել երեխայի ախորժակին և սնվելու գրաֆիկին: Չի խրախուսվում երեխային ստիպել սնվել ախորժակի բացակայության պայմաններում կամ զրկել սննդից գլիկեմիայի կարգավորման համար, քանզի դա կարող է բացասաբար ազդել աճի և զարգացման վրա [17]:
- Սեռահասունացման շրջանում էներգիայի ընդունումը և սննդային պահանջները զգալիորեն աճում են ինսուլինի դեղաչափի նշանակալի բարձրացման հետ միաժամանակ:

Մարմնի քաշի պահպանումը

- Չնայած էներգիայի ընդունումը կարգավորվում է ախորժակի միջոցով, սննդի մեծաքանակ օգտագործման դեպքում ընդունված ավելցուկային էներգիան հանգեցնում է ճարպակալման:
- Երեխաների շրջանում ճարպակալման տարածվածությունը արագորեն աճում է ամբողջ աշխարհում [18]: Դրա պատճառը գերսնուցման և ֆիզիկական ակտիվության բացակայության համադրությունն է: Շաքարային դիաբետ ունեցող երեխաների դեպքում այլ նպաստող գործոններն են ինսուլինի գերդոզավորումը, սննդի հավելյալ ընդունումները (snacks) և հիպոգլիկեմիայից խուսափելու կամ այն հաղթահարելու համար ավելցուկային էներգիայի օգտագործումը:

- Ավելորդ քաշի/ճարպակալման կանխարգելումը առողջապահական հիմնական ռազմավարությունն է: Կարևոր է սովորեցնել ընտանիքին ընտրել ճիշտ սնունդ, անհրաժեշտ չափաբաժիններ, հետևել սննդի էներգետիկ բաղադրությանը, սննդի ընդունման կանոնավորությանը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվությանը [2]:
- Ընդհանուր առմամբ շաքարային դիաբետով բոլոր երեխաները անկախ տարիքից և սեռից ավելի շատ են կշռում համեմատած իրենց հասակակիցների հետ, որոնք չունեն շաքարային դիաբետ [19]: Ավելի նոր հետազոտությունները չեն հայտնաբերել տարբերություն ավելորդ քաշի և ճարպակալման մակարդակների համեմատած ընդհանուր պոպուլյացիայի հետ [20, 21]:
- Ավելորդ քաշի դեմ պայքարի միջոցառումների կարևոր բաղադրիչներն են
 - Չափել և նշել հասակը, քաշը և ՄՋԻ-ն աճի համապատասխան կորերի վրա [18], հնարավորության դեպքում նաև գոտկատեղի շրջագիծը յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ: Ներկայումս 16 տարեկանից ցածր երեխաների համար չկան գոտկատեղի շրջագծի սահմանված միջազգային ռեֆերենսային ցուցանիշներ: 16 տարեկան և ավելի բարձր տարիքի երիտասարդների համար նախատեսված թիրախային ռեֆերենսային ցուցանիշներն են կանանց համար <80 սմ-ից , իսկ տղամարդկանց համար <94 սմ-ից [22]:
- Դիետոլոգի կողմից սնուցման կանոնավոր վերլուծություն:
- Խրախուսել ամենօրյա կանոնավոր միջին ինտենսիվության/ինտենսիվ ֆիզակական ակտիվություն (60ր/օր) [23]:
- Խորհրդատվություն հիպոգլիկեմիան կանխարգելելու և դրա ճիշտ բուժման հետ կապված (ավելորդ կերակրումից խուսափելու համար):
- Ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ հիպոգլիկեմիայից խուսափելու համար նախապատվությունը տալ ինսուլինի կարգավորմանը, այլ ոչ թե հավելյալ սննդի ընդունմանը:
- Ինսուլինի ընդունման ռեժիմի վերլուծություն՝ հիպոգլիկեմիաները և մեծ քանակով հավելյալ սննդի ընդունման անհրաժեշտությունը նվազեցնելու համար:
- Ոչ նորմալ սննդային վարքի դեպքում անհրաժեշտ է հոգեբանական խորհրդատվության:

Էներգիայի ընդունման հետ կապված խորհրդարկություն

Էներգիայի ընդունումը օրվա ընթացքում բաշխելու մասին խորհուրդները բերված են ստորև: Սակայն մակրոէլեմենտների օպտիմալ բաշխումը տարբեր է երիտասարդ հիվանդի անհատական գնահատականից կախված: Ավստրալիայի և Կանադայի ազգային ուղեցույցները դիաբետ ունեցող երեխաներին և մեծահասակներին խորհուրդ են տալիս ընդունվող էներգիայի 45-60% ստանալ ածխաջրերի հաշվին [2,6]: Ածխաջրերի սահմանափակման դեպքում առավել կարևոր է դառնում ընդունված ճարպի որակը: Շաքարային դիաբետ ունեցող երեխաների շրջանում կատարված սննդային հետազոտությունները պարզել են, որ ածխաջրերի ընդունման նվազեցման դեպքում երեխաները հակվածություն են ցուցաբերում դեպի մեծ քանակի հագեցած ճարպի օգտագործումը [32-35]:

- Ածխաջրեր 50-55% (3)
- Սախարոզի չափավոր օգտագործում (մինչև էներգիայի ընդհանուր քանակի 10%-ը) [6]
- Ճարպեր 25-35%
- <10% հագեցած ճարպեր + տրանս ճարպաթթուներ
- <10% պոլիչհագեցած ճարպեր
- > 10% մոնոչհագեցած ճարպեր (մինչև էներգիայի ընդհանուր քանակի 20%-ը) [5]
- Սպիտակուցներ 15-20 % [2,3]

Սննդի բաղադրիչները

Ածխաջրեր

Գոյություն ունի միջազգային համաձայնություն, ըստ որի ածխաջրերը չպետք է սահմանափակվեն տիպ 1 շաքարային դիաբետով երեխաների և դեռահասների համար, քանի որ դա կարող է բացասաբար անդրադառնալ աճի վրա:

- Մասնագետները պետք է խրախուսեն առողջ, ածխաջրերով հարուստ սննդամթերքի աղբյուրների օգտագործումը, ինչպիսիք են ամբողջական հացահատիկից պատրաստված

հացը, հացահատիկային մշակաբույսերը, լոբազգիները (ոլոռ, լոբի և ոսպ), մրգերը, բանջարեղենը և ցածր յուղայնությամբ կաթնամթերքը (իսկ յուղոտ մթերքը <2տ երեխաների համար):

Սախարոզ

Սախարոզը և սախարոզ պարունակող սնունդը պետք է ուտել առողջ սննդակարգի համատեքստում, ընդ որում սախարոզի հետ ընդունվող այլ սնուցիչների (օրինակ՝ ճարպ) ընդունումը ևս պետք է հաշվի առնել [4]:

Սախարոզը չի բարձրացնում գլիկեմիան ավելի, քան դրան կալորիապես հավասար կրախմալի ընդունումը [24]: Չափավոր քանակի դեպքում սախարոզով կարելի է փոխարինել ածխաջրերի այլ աղբյուրները՝ չառաջացնելով հիպերգլիկեմիա: Սախարոզի ընդունման դեպքում դրա քանակը պետք է հավասարակշռության մեջ պահել ինսուլինի դեղաչափի հետ [17]:

Սախարոզը պետք է կազմի օրական էներգիայի ընդունման մինչև 10%-ը [6]: Ոչ բոլոր երկրներն ունեն հատուկ խորհուրդներ շաքարի, մոնոսախարիդների կամ դիսախարիդների ընդունման համամասնության հետ կապված:

- Սախարոզով քաղցրացված ըմպելիքների օգտագործումը կապում են մարմնի ավելորդ քաշի հետ [25]: Քաղցր ըմպելիքների մեծ քանակությունը դժվար է համակշռել ինսուլինով և դրանց ընդունումը կարող է հանգեցնել հիպերգլիկեմիայի: Դիաբետ ունեցող երեխաներին շաքարով հարուստ ըմպելիքների փոխարեն խորհուրդ է տրվում օգտագործել դիետիկ կամ քիչ շաքարով ըմպելիքները հատուկ առիթների ժամանակ:

- Սախարոզը կարելի է օգտագործել գլյուկոզայի փոխարեն հիպոգլիկեմիայի կանխարգելման կամ բուժման համար:

• Բջջանյութ

- Երեխաների կողմից բջջանյութի իրական ընդունումը տարբեր երկրներում ավելի ցածր է, քան խորհուրդ է տրվում [27]:

- Խորհուրդ է տրվում (յուրաքանչյուր Մեգաջոուլի համար 3,3գ բջջանյութ, 1 մեգաջոուլը= 240կկալ) օրական բջջանյութի օգտագործման ավելի բարձր ցուցանիշ (Աղ. 10.1):

Տարիք	Թույլատրելի բջջանյութ
Մինչև 1տ	Սահմանված չէ
≥1 տ (26)	14գ/4184կՋ (1000 կկալ) 3,3գ/ՄՋ
Կամ՝	
>2տ երեխաներ	Տարիք +5= բջջանյութ գրամ/օր

- Պետք է խրախուսել բջջանյութ պարունակող տարբեր սննդամթերքների օգտագործումը, ինչպիսիք են լոբազգիները, մրգերը, բանջարեղենն ու ամբողջական հացահատիկները: Բանջարեղենում, լոբազգիներում և մրգերում պարունակվող լուծվող բջջանյութը մասնավորապես օգտակար է լիպիդների մակարդակն իջեցնելու համար [28, 29]:
- Մրգային պեկտինը պաշտպանողական է սրտանոթային հիվանդությունների տեսանկյունից [30]:
- Հացահատիկներում պարունակվող չլուծվող բջջանյութը նպաստում է աղիների բնականոն գործունեությանը:
- Ընդունվող սննդում բջջանյութի պարունակությունը պետք է մեծացնել աստիճանաբար՝ մարսողության հետ կապված անհարմարություններից խուսափելու համար:
- Բջջանյութի ընդունման ցանկացած աճ պետք է ուղեկցվի հեղուկի ընդունման աճով:
- Բջջանյութով հարուստ սնունդը կարող է բարելավել հագեցվածության զգացումը և փոխարինել ավելի կալորիական սննդին:
- Վերամշակելուց հետո, սննդամթերքը սովորաբար կորցնում է բջջանյութի մի մասը, այնպես որ պետք է խրախուսել թարմ, չմշակված սննդամթերքի օգտագործումը:

Ճարպեր

Ընդհանուր բնակչության համար ճարպի սպառման վերաբերյալ ուղեցույցներում առաջարկվում է, որ օրգանիզմում օրական ճարպերի հաշվին ընդունված էներգիան չգերազանցի 30-35% [31]: Մեծահասակների համար նախատեսված ուղեցույցներում օրական ճարպերի հաշվին էներգիայի ընդունման վերաբերյալ խորհուրդները տարբերվում են՝ դրանց բացակայությունից մինչև 35% [2, 4, 6]: Ընդհանուր ճարպերի մեծաքանակ օգտագործումը մեծացնում է ավելորդ քաշի և ճարպակալման ռիսկերը [31]: Հազեցած և տրանս-ճարպերի մեծաքանակ օգտագործումը կապված է սիրտանոթային հիվանդությունների ռիսկի մեծացման հետ [2, 32]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիարետ ունեցող երեխաները և երիտասարդները օգտագործում են ավելի շատ ճարպ՝ այդ թվում հազեցված, քան խորհուրդ է տրվում [32-35]:

Կլինիկական պրակտիկայում սննդային ճարպի վերաբերյալ խորհուրդների հիմնական նպատակն է նվազեցնել ընդհանուր ճարպերի, հազեցած և տրանս-ճարպերի ընդունումը [5]: Լիպիդային պրոֆիլի բարելավման համար որպես փոխարինող կարող են օգտագործվել մոնո-չհազեցած ճարպաթթուներ (ՄՉՃԹ) և պոլի-չհազեցած ճարպաթթուներ (ՊՉՃԹ) [5]:

• Սննդակարգը ուսուցանելիս կարևոր է հետևել, որ ածխաջրերի հաշվարկի մեթոդների օգտագործումը չհանգեցնի ընդհանուր ճարպերի և/ կամ հազեցված ճարպերի օգտագործման ավելացման:

Հազեցած ճարպեր և տրանս-ճարպաթթուներ

• Հազեցած ճարպի և տրանս ճարպաթթուների հաշվին օրական էներգիայի ընդունման վերաբերյալ խորհուրդները համապատասխանում են ընդհանուր բնակչության համար նախատեսված խորհուրդներին: Հազեցած ճարպերի և տրանս-ճարպաթթուների հաշվին խորհուրդ է տրվում ստանալ ոչ ավելի, քան օրական էներգիայի 10%-ը [36]: Հազեցած ճարպերը արյան պլազմայում LDL խոլեստերինի մակարդակի հիմնական դիետիկ որոշիչն են: Հազեցած ճարպեր պարունակում են յուղոտ կաթնամթերքը, յուղոտ միսը և խորտիկները: Բուսական յուղերի վերամշակման և պնդեցման (հիդրոգենիզացիա) ժամանակ ձևավորված տրանս-ճարպաթթուները պարունակվում են մարգարինի,

տապակման համար նախատեսված յուղերի, ինչպես նաև պատրաստի թխվածքաբլիթների և տորթերի մեջ:

• Անհրաժեշտ է փոխարինել հազեցած ճարպերը ոչ հազեցածներով, օգտագործելով ոչ յուղոտ միս, ձուկ, ցածր յուղայնության դիետիկ կաթնամթերք, կատարել անցում ՄՉՃԹ և ԲՉՃԹ խոհարարական յուղերի և մարգարինի:

Անցումը ամբողջովին մեկ որոշակի սննդակարգի, օրինակ՝ միջերկրածովյան, կարող է օգնել փոխել սննդային կարծրատիպերը [37]:

Մոնո-չհազեցած և պոլի-չհազեցած ճարպաթթուներ

- Չհազեցած ճարպաթթուները լիպիդային թաղանթների կարևոր բաղադրիչներից են:
- Օրական էներգիայի 10-20 %-ը խորհուրդ է տրվում ստանալ ՄՉՃԹ-ից [36]: Ձիթապտղի, քունջութի, գենտանուշի յուղերում, ինչպես նաև ընկույզի յուղում պարունակվող ՄՉՃԹ-ները(մասնավորապես ցիս- կոնֆիգուրացիան) կարող են օգնել վերահսկել լիպիդների մակարդակը և պաշտպանել սիրտ-անոթային հիվանդություններից:
- Խորհուրդ է տրվում ՊՉՃԹ-ից ստանալ օրական էներգիայի 10 %-ից պակասը [36]: Հազեցած ճարպերի փոխարեն բուսական ծագման ՊՉՃԹ-ը, որոնց պարունակությունը բարձր է եգիպտացորենի, արևածաղկի, սոյայի յուղերի, յուղոտ ծովային ձկան մեջ կարող են բարելավել լիպիդների մակարդակը
- Խորհուրդ է տրվում n-3 ճարպաթթուներով հարուստ յուղոտ ձկան օգտագործումը: Երեխաներին խորհուրդ է տրվում ուտել յուղոտ ձուկ շաբաթական 1 կամ 2 անգամ 80-120 գ չափաբաժնով [38,39]:
- Պետք է օգտագործել n-3 ճարպաթթուների սննդային հավելումներ կամ յուղոտ ձուկ եռզլիցերիդների բարձր մակարդակի դեպքում:
- Կարելի է օգտագործել բուսական ստերոլ և ստանոլի էսթերներ (մարգարինի և կաթնամթերքի մեջ) 5 տարեկան և ավելի մեծ երեխաների համար, եթե ընդհանուր և / կամ LDL խոլեստերինը շարունակում է բարձր մնալ (40, 41):

Հիպերլիպիդեմիա

Հիպերլիպիդեմիայի կառավարումը պահանջում է համընդհանուր մոտեցում (42)

- Առաջին հերթին պետք է խստացնել գլիկեմիայի վերահսկողությունը:
- Նվազեցնել հագեցած ճարպեր ընդունումը մինչև 7% և մեծացնել լուծվող բջջանյութի և հակաօքսիդանտների սննդային աղբյուրները:
- Կենսակերպի փոփոխություն (մարմնի քաշի վերահսկողություն, ֆիզիկական ակտիվության բարձրացում) և հնարավորության դեպքում դադարեցնել ծխախոտի օգտագործումը [39]:
- Միայն այն դեպքում, երբ հնարավոր չէ խստացնել գլիկեմիայի վերահսկողությունը և/կամ կենսակերպը կամ հիպերլիպիդեմիան պահպանվում է անկախ ձեռնարկված միջոցներից, ապա կարելի է դիմել դեղորայքային միջոցներին

Սպիտակուցներ

- Սպիտակուցների օգտագործումը տարիքի հետ նվազում է օրը 2գ/կգ վաղ մանկական հասակում, այնուհետև մինչև 1գ/կգ 10 տարեկան երեխաների համար և մինչև 0,8-0,9 գ/կգ դեռահասների համար [43]:
- Սպիտակուցների օգտագործումը ամբողջ աշխարհում բավականին տարբեր է՝ կախված տնտեսական վիճակից և դրանց հասանելիությունից:
- Սպիտակուցը նպաստում է աճին միայն բավարար ընդհանուր էներգակիրառման դեպքում:
- Բարձր սպիտակուցային սննդակարգերը, որոնք ապահովում են օրական էներգիայի 25%-ից ավելին, սովորաբար խորհուրդ չեն տրվում 1-ին տիպի շաքարային դիաբետ ունեցող երեխաներին, քանի որ դրանք կարող են ազդել աճի և վիտամինների ու հանքանյութերի օգտագործման վրա:
- Սպիտակուցի բարր պարունակությամբ ըմպելիքները ու սննդային հավելումները սովորաբար պետք չեն շաքարային դիաբետով երեխաներին: Դրանց օգտագործումը հնարավոր է միայն մասնագետների անհատական խորհուրդներին հետևելով:
- հարկ է խրախուսել բուսական սպիտակուցների օգտագործումը, որոնք պարունակում են լրբազգիները: Կենդանական ծագման սպիտակուցների համար կարելի է ուտել ձուկ, ոչ յուղոտ միս և ցածր յուղայնության դիետիկ կաթնամթերք [2]:

• Պերսիստենտ միկրոալբումինուրիայի կամ նեֆրոպաթիայի դեպքում ավելորդ սպիտակուցի ընդունումը (25%-ից ավել) կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Ընդունումը պետք է սահմանափակվի թույլատրված միջակայքի ամենաստորին մակարդակի սահմաններում [5]: Սպիտակուցների ընդունումը սահմանափակելու համար չկան բավարար փորձարարական տվյալներ: Դեռահասային տարիքում սպիտակուցների ընդունման ցանկացած փոփոխություն չպետք է խանգարի նորմալ աճին և պահանջում է գնահատում դիետոլոգի կողմից (Ե):

Վիտամիններ, հանքանյութեր և հակաօքսիդանտներ

Շաքարային դիաբետ ունեցող երեխաներն ունեն վիտամինների ու հանքանյութերի նույն պահանջը ինչպես մյուս բոլոր առողջ երեխաները [2]:

Անբավարարության բացակայության դեպքում դիաբետ ունեցող երեխաները վիտամինների և հանքանյութերի հավելումներ ընդունելու կարիք չունեն:

Խորհուրդ է տրվում անհատական սննդակարգի այնպիսի պլանավորում, որն օպտիմալացնում է սննդամթերքի նախասիրությունները, այնպես որ սննդակարգը բավարարի բոլոր սննդային միկրոտարրերի համար նախատեսված նորմերը:

Թարմ մրգերը և բանջարեղենը պարունակում են մեծ քանակությամբ հակաօքսիդանտներ (տոկոֆերոլներ, կարոտենոիդներ, վիտամին C, ֆլավոնոիդներ): Վերջիններիս օգտագործումը պետք է խորհուրդ տրվի դիաբետ ունեցող երեխաներին և երիտասարդներին՝ պաշտպանելու համար նրանց սիրտանոթային համակարգը:

Որոշ երկրներում վաղ հասակի առողջ երեխաներին, ազգային ուղեցույցների համաձայն խորհուրդ են տրվում վիտամին D-ի հավելումներ: Եթե վիտամին D-ի մակարդակը ցածր է, ապա այն պետք է նշանակվի ընդհանուր բնակչության համար խորհուրդների համաձայն [44]:

Աղեր

Դիաբետ ունեցող երեխաները պետք է սահմանափակեն աղի օգտագործումը, առնվազն այնքանով, որ չգերազանեն ընդհանուր պոպուլյացիայի համար թույլատրելի քանակը: Աղի

խորհուրդ տրվող քանակությունն է 1500 մգ/օր (3.8 գ կերակրի աղ/օրական) ≥ 9 տարեկան երեխաների համար [26]:

Կողմնորոշիչներ փոքր տարիքի երեխաների համար՝

- 1-3 տարեկան՝ 1000 մգ/օր (2,5 գ կերակրի աղ օրական)
- 4-8 տարեկան՝ 1200 մգ/օր (3 գ աղ օրական) [26]:

Աղը արդեն առկա է բոլոր պատրաստի/ վերամշակված մթերքներում (օգտագործվող աղի միայն 20%-ն է ավելացվում պատրաստման ժամանակ կամ սեղանի շուրջ):

- Շատ երկրներում աղի ընդունումը չափազանց բարձր է, վերամշակված սննդամթերքի մեծ պահանջարկի հաշվին:
- Խորհուրդ է տրվում ամբողջ ընտանիքին նվազեցնել վերամշակված սննդամթերքի օգտագործումը և զարգացնել հմտությունները թարմ մթերքից ինքնուրույն սննդի պատրաստման համար:
- Խորհուրդ տալ նվազեցնել կերակրի աղի ավելացումը սննդամթերքին պատրաստման գործընթացում կամ արդեն պատրաստի սննդին:

Ալկոհոլ

Գլյուկոնեոգենեզի ընկճման պատճառով ալկոհոլի մեծաքանակ օգտագործումը կարող է հանգեցնել երկարատև հիպոգլիկեմիայի ՇԴ ունեցող երիտասարդների մոտ (մինչև 10-12 ժամ օգտագործելուց հետո՝ կախված ընդունած ծավալից) [45]: Եթե երեխան կամ երիտասարդը ալկոհոլը դարձնում է իր կենսակերպի մասը կամ նախապատրաստվում է տեղափոխվել մեծահասակների պոլիկլինիկա, պետք է երեխայի ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի վրա:

- Շատ հասարակություններում ալկոհոլը արգելված է, մեծ մասում սահմանափակումը տարիքային է, սակայն ալկոհոլի չարաշահումը շարունակում է մնալ պոտենցիալ խնդիր:
- Ալկոհոլի օգտագործումը երեխաների շրջանում կարող է հանգեցնել ռիսկային վարքագծի

- Գոյություն ունեն ալկոհոլային խմիչքների տեսակներ, որոնց համար թիրախային խումբ են հենց երիտասարդները: Անհրաժեշտ է սովորեցնել թե ինչպես հաշվարկել ալկոհոլի պարունակությունը տարբեր խմիչքներում:
- Հարկ է օգտագործել ածխաջրատային սնունդ մինչ ալկոհոլի օգտագործումը և/կամ դրա ժամանակ, և/կամ դրանից հետո: Անհրաժեշտ է նաև ինսուլինի դեղաչափը հարմարեցնել, հատկապես այն դեպքում, երբ ալկոհոլի օգտագործումը ուղեկցվում է ֆիզիկական ակտիվությամբ:
- Խորհուրդ է տրվում չափավոր օգտագործել ալկոհոլը, ինչպես նաև առաջարկել օգտագործվող ալկոհոլի քանակն իջեցնելու պրակտիկ միջոցներ՝ օգտագործել ալկոհոլի ցածր պարունակությամբ գարեջուր:
- Ցածր ածխաջրային պարունակությամբ կամ «դիաբետիկ» գարեջրին պետք է զգուշությամբ վերաբերվել, քանի որ հաճախ ալկոհոլի պարունակությունը դրանում իջեցված չէ:
- Գիշերային հիպոգլիկեմիայի կանխարգելման համար անհրաժեշտ է ձեռնարկել հատուկ միջոցներ, ինչպիսիք են հավելյալ սննդի ընդունումը (snack) քնելուց առաջ և գլիկեմիայի ավելի հաճախ ստուգում գիշերվա ընթացքում մինչև առնվազն հաջորդ օրվա կեսօր [3]:
- Անհրաժեշտ է խրախուսել երեխաներին կրել շաքարային դիաբետի մասին վկայող նույնականացնող իր (օրինակ՝ քարտ, թևնոց):

Սննդամթերք նախատեսված հաղորդ դիաբետոսի ունեցողների համար

- Նման սննդամթերքի օգտագործման անհրաժեշտություն չկա, քանզի դրանք թանկ են, հաճախ պարունակում են շատ ճարպեր և կարող են պարունակել լուծողական էֆեկտ ունեցող քաղցրացուցիչներ: Դրանց թվին է պատկանում սորբիտոլը:
- Չնայած սնուցման վերաբերյալ միջազգային ուղեցույցները խորհուրդ են տալիս սախարոզի չափավոր օգտագործում [2-6], հատուկ դիաբետիկ սննդամթերքը նախկինի պես առկա է վաճառքում որոշ երկրներում:

Արհեստական և ինսլենսիվ քաղցրացուցիչներ

- Պետք է խորհուրդ տալ օգտագործել ջուր քաղցրացված և խթանող (ստիմուլացնող) խմիչքների փոխարեն:
- Քաղցրացված ըմպելիքները խորհուրդ չեն տրվում, դրանք հանգեցնում են քաշի ավելացման և հիպերգլիկեմիայի, քանի որ ինսուլինի դեղաչափը հաճախ չի համապատասխանում ածխաջրերի քանակին: Դիետիկ ըմպելիքները համարվում են ավելի նախընտրելի այլընտրանք:
- Ինտենսիվ քաղցրացուցիչով ցածր յուղայնությամբ յոգուրտները կարող են օգտագործվել, հատկապես ավելորդ քաշի դեպքում:
- Սախարինը, նեոտամը, ասպարտամը, ացեսուլֆամ K, ցիկլամատները (որոշ երկրներում), ալիտամը և սուկրալոզան օգտագործվում են դիետիկ, շաքարի ցածր պարունակությամբ մթերքներում քաղցրացման և համային հատկանիշների լավացման համար:
- Որոշ երկրներում սահմանվել են թույլատրելի օրական չափաբաժիններ:
- Դեռևս չի հրատարկվել ոչ մի գիտական աշխատություն թույլատրելի օրական չափաբաժիններով շաքարի արհեստական քաղցրացուցիչների օգտագործման վնասի մասին :

Սննդակարգի պլանավորման և ուսուցանման ուղեցույց

1. Սննդակարգի վերաբերյալ նախնական խորհրդատվությունը պետք է իրականացվի մանկական դիաբետոլ գրադվոլ մասնագետի/ դիետոլոգի կողմից ավստորոշումից հետո հնարավորինս շուտ, որպեսզի ստեղծվեն վստահելի և աջակցող հարաբերություններ [13]:

Սննդակարգի վերաբերյալ անհրաժեշտ է տեղեկատվություն հավաքել, որը կներառի՝

- Ընտանիքում առկա սննդային սովորույթները, ավանդույթները և համոզմունքները:
- Երեխայի սովորական սննդակարգը, ներառյալ էներգետիկ արժեքը, ածխաջրերի և ճարպերի ընդունումը, սննդամթերքի որակը, արագ սնունդը և սննդի ընդունման ժամերը:

- Երեխայի ամենօրյա գործողությունները, ներառյալ մանկապարտեզի / դպրոցի / քոլեջի /, ֆիզիկական ակտիվության և դրանց ժամանակացույցի ազդեցությունը:

2. Դիաբետի ախտորոշման ժամանակ սննդակարգի վերաբերյալ խորհրդատվությունը պետք է կատարվի դիաբետի թիմի կողմից սահմանված անհատական սննդային պլանից ելնելով: Սննդակարգի վերահսկում այցերի ժամանակ պետք է կատարվի մասնագիտացված մանկական դիաբետոլոգի/դիետոլոգի կողմից ախտորոշումից հետո 3-6 ամիսների ընթացքում՝ ընդ որում առաջին անգամ ախտորոշումից հետո մեկ ամսվա ընթացքում [11]: 3. Հետագա այցելությունները դիետոլոգին կախված են տեղական պայմաններից, նվազագույնը պետք է իրականացվի առաջին տարում 2-4 անգամ, այնուհետև ամենամյա վերազնահատում [11]: Սրանք անհրաժեշտ են երեխայի աճը, դիաբետի վերահսկողությունը, սոցիալ-հոգեբանական ադապտացիան, ապրելակերպի փոփոխությունները հսկելու և սննդակարգի սպեցիֆիկ խնդիրները հայտնաբերելու համար: Այդպիսի խնդիրներն են դիսֆունկցիոնալ սննդային սովորությունները, սննդի, գիրության և ուտելու խանգարումների շուրջ ընտանեկան մոտեցումները:

4. մասնագետները համաձայնության են եկել, որ շարունակական աջակցությունը և դիետոլոգի վերահսկողությունը կարևոր են օպտիմալ խնամքի համար:

5 Ինսուլինի ռեժիմը փոփոխությունը, դիսլիպիդեմիան, սննդակարգի վատ իմացությունը, ավելորդ քաշի ավելացումը և ուղեկցող հիվանդությունները (օրինակ՝ ցելիակիան) պահանջում են լրացուցիչ ուսուցում և սննդակարգային միջամտություն՝ ավելի հաճախակի վերանայման անհրաժեշտությամբ:

6 Սննդակարգի վերաբերյալ ուսուցումը պետք է լինի անհատական, երեխայի տարիքին և հասունության աստիճանին համապատասխան՝ ուսուցման գործընթացում երեխայի ակտիվ ընդգրկման համար[47]:

Ուսուցողական գործիքներ և մեթոդներ

Ուսուցողական գործիքները և մեթոդները օգտագործվում են գիտելիքներ և հմտություններ փոխանցելու՝ գլխկեմիայի հսկողությունը և սիրտանոթային ելքերը բարելավելու համար:


- Չկա միջազգային համաձայնություն ուսուցման համար առավել հարմար գործիքների և մեթոդների վերաբերյալ, թեև ածխաջրերի հաշվարկի մեթոդը առանցքային է:
- Չկա որևէ որակյալ, երկարաժամկետ, պատահական բաշխմամբ վերահսկվող հետազոտություն ի օգուտ ածխաջրերի հաշվարկի որևէ մեթոդի:
- գլիկեմիայի մոնիթորինգը (պրեպրանդիալ և պոստպրանդիալ) հաստատում է ընտրված մեթոդի արդյունավետությունը:
- Երբ ընտանիքը հմտանում է դիաբետի կառավարման հարցում, կարելի է ուսուցանել գլիկեմիկ ինդեքսը, ճարպերով, սպիտակուցով հարուստ սննդի դեպքում ինսուլինի ընդունումը
- Երեխաների մեծանալուն և պատասխանատվություն ստանձնելուն զուգընթաց անհրաժեշտ է վերակրթել նրանց:

Ստորև թվարկված են տարբեր գործիքների օրինակներ՝ պարզից բարդ, որոնք կարող են օգտագործվել ուսուցման տարբեր փուլերում: Հիմնական սննդակարգի ուսուցումը պետք է ներառի առողջ սնվելու սկզբունքը և որևէ քանակական մեթոդով ածխաջրերի հաշվարկը:

Առողջ սննդակարգի ուսուցանման գործիքներ

Ափսեի մոդելի մեթոդը (տես՝ Նկար 1.) տրամադրում է հիմնական սննդային ինֆորմացիան և առողջ սննդակարգի սկզբունքները: Այն նաև արտացոլում է ածխաջրատային սննդամթերքի հարաբերությունը սննդի այլ բաղադրիչներին, ինչպես նաև երեխաների համար գրավիչ ցուցադրական գործիք է: Հիմնական սննդի ընդունումները (օրական առնվազն երեք բալանսավորված սնունդի ընդունում) և սննդի հավելյալ ընդունումները (snacks) ապահովում են սննդանյութերի օրական անհրաժեշտ քանակը[48]:

Նկար 1.



Ածխաջրերի գնահատում և մեթոդներ

- Ածխաջրերի և առկա ինսուլինի քանակությունները պոստպրանդիալ գլիկեմիայի կարգավորման վրա ազդող ամենակարևոր գործոններն են [4, 49]:

Այլ սննդակարգային փոփոխականները, ինչպիսիք են գլիկեմիկ ինդեքսը, ճարպերը, սպիտակուցները, բջջանյութը ևս ազդում են պոստպրանդիալ գլիկեմիայի վրա և պետք է հաշվի առնվեն պոստպրանդիալ գլիկեմիայի մակարդակի մեկնաբանման և օպտիմալացման գործընթացում [50-53]: Այնուամենայնիվ, շատ ուսուցողական գործիքներ հիմնված են այն դրույթի վրա, որ ածխաջրերի քանակը և տիպը պոստպրանդիալ արձագանքի առաջնային որոշիչ գործոններն են [54] և ածխաջրերի բաշխման հետ մեկտեղ [55] կազմում են կրթական ծրագրերի մեծ մասի հիմքը:

Հիվանդների ուսուցանման լայնածավալ նյութեր հասանելի են շատ երկրներում, որոնք օգնում են դեռահասներին և ընտանիքներին գնահատել սննդում ածխաջրերի պարունակությունը գրամներով, փոխանակային միավորներով կամ չափաբաժիններով: Զգալի ժամանակ է պահանջվում հիվանդներին կրթելու թե ինչպես կարդալ և մեկնաբանել սննդամթերքի պիտակները, գնահատել ածխաջրերի քանակը և ընտրել առողջ սննունդ:

Կարևոր է ուսուցանել առողջ, բալանսավորված սննդակարգի հիմունքները՝ ոչ միայն գլիկեմիկ հսկողությունը բարելավելու այլև սիրտանոթային ռիսկերը նվազեցնելու համար:

Ածխաջրերի ընդունման վերաբերյալ ուսուցումը պետք է լինի անհատականացված երեխայի և ընտանիքի համար՝ նրանց հասկացողությանը և ինսուլինի ռեժիմին համապատասխան:

Ածխաջրերի հաշվարկը

Ածխաջրերի հաշվարկը սննդակարգի պլանավորման մոտեցում է, որը կենտրոնացած է ածխաջրերի վրա որպես պոստպրանդիալ գլիկեմիայի վրա ազդող հիմնական սնուցիչ: Այն ուղղված է բարելավել գլիկեմիկ հսկողությունը և կատարել ճկուն սննդային ընտրություններ [56]:

Մեծահասակների շրջանում կատարված հետազոտությունները արձանագրել են գլիկեմիայի և կենսակերպի դրական փոփոխություններ ածխաջրերի հաշվարկ կատարելու դեպքում[57-59]: Փոփոխությունները ներառում են գլիկեմիկ հսկողության բարելավում՝ չափված գլիկոզիլացված հեմոգլոբինի (HbA1c) մակարդակով [59-62], և կենսակերպի բարելավում [59, 60, 61, 62]:

Սնուցման և Դիետիկայի Ամերիկյան Ակադեմիան սահմանել է ածխաջրերի հաշվարկի երեք մակարդակներ[64]:

- Մակարդակ 1. Ածխաջրերի հետևողական ընդունում: Այս մակարդակը ածխաջրերը ներկայացնում է որպես սննդի հիմնական բաղադրիչ, որը բարձրացնում է արյան գլյուկոզան: Ածխաջրերի հետևողական ընդունումը խրախուսվում է՝ օգտագործելով սննդի փոխանակային միավորների կամ նախապես հաշվարկված չափաբաժինների ցուցակներ: Սա հարմար է օրական երկու անգամյա ինսուլինի ներարկման սխեմայի պարագայում, երբ պահանջվում է ածխաջրերի ամենօրյա հավասարաչափ հետևողական ընդունում [55]:
- Մակարդակ 2. Օրինաչափությունների կառավարման սկզբունքներ: Սա միջանկյալ մակարդակ է, երբ հիվանդները շարունակում են կանոնավոր օգտագործել ածխաջրեր, ներարկել հաստատուն բազալ ինսուլինի դեղաչափ և հաճախակի վերահսկում են

գլյուկոզայի մակարդակը: Նրանք սովորում են ճանաչել գլիկեմիայի փոփոխության օրինաչափությունները ածխաջրերի ընդունմանը ի պատասխան՝ ինսուլինի եւ ֆիզիկական ակտիվության ազդեցության ներքո: Հասկանալով օրինաչափությունները և հետևելով թիմի խորհուրդներին հիվանդները փոփոխում են ինսուլինի դեղաչափը սննդին և ֆիզիկական ակտիվությանը համապատասխան: Մանկաբուժական թիմերը այս մեթոդը հազվադեպ են օգտագործում, քանի որ օգտագործում են կամ ածխաջրերի հաստատուն քանակություն կամ ինսուլին- ածխաջրային գործակիցը(ICRs):

- 3-րդ մակարդակ. ICRs-ինսուլին-ածխաջրային գործակից: Ածխաջրերի հաշվարկի այս մակարդակը հարմար է ինսուլինի ամենօրյա բազմակի ներարկումների (MDI) կամ պոմպային ինսուլինոթերապիայի դեպքում: Այն ներառում է ICR հաշվարկը, որը յուրաքանչյուր երեխայի համար անհատականացված է՝ ըստ տարիքի, սեռի, սեռահասունության աստիճանի, հիվանդության տևողության և ակտիվության: Սա հնարավորություն է տալիս շաքարային դիաբետոսով երիտասարդներին հարմարեցնել իրենց պրանդիալ ինսուլինի դեղաչափը ընդունած ածխաջրերի քանակին:

Շատ շաքարային դիաբետի մանկական կենտրոններ օգտագործում են միայն ածխաջրերի հաշվարկի 3-րդ մակարդակը ինտենսիվ ինսուլինոթերապիայի դեպքում [65]:

Ածխաջրերի հաշվարկի տարածված մեթոդներն են՝

- ածխաջրերի հաշվարկ գրամներով
- 10-12 գ ածխաջրերի չափաբաժիններ (համապատասխանում է 1 հացային միավորին)
- 15 գ ածխաջրերի փոխանակային միավորներով (exchanges)

Ըստ հետազոտությունների ապացուցված չէ ածխաջրերի հաշվարկի ուսուցման որևէ մեթոդ (գրամ, մասնաբաժին կամ փոխանակում) առավելություն մյուսների նկատմամբ[66, 67]:

Գլիկեմիկ ինդեքս (GI) և գլիկեմիկ ծանրաբեռնվածություն

Ապացուցված է, որ GI-ի օգտագործումը լրացուցիչ օգուտ է տալիս գլիկեմիկ հսկողությանը՝ համեմատած միայն ածխաջրերի հաշվարկի հետ[72, 73]: Տիպ 1 շաքարային դիաբետի

ժամանակ GI- ն չպետք է օգտագործվի առանձին, այ ածխաջրերի հաշվարկի հետ միասին [74]:

Երեխաների շրջանում բարձր GI-ով սննդամթերքի փոխարինումը ցածր GI-ով սննդամթերքով բարելավել է գլիկեմիկ հսկողությունը 12 ամիս՝ համեմատած ավելի ավանդական սննդակարգային խորհրդատվության հետ [75]:

- Ցածր GI-ով սննդամթերքը կարող է նվազեցնել պոստպրանդիալ հիպերգլիկեմիան, երբ փոխարինում են ավելի բարձր GI-ով սննդամթերքին [6]: Սա ԻԱԲՆ (MDI) օգտագործող երեխաների սննդակարգային հետազոտության արդյունքներն են [76]:

- Ցածր GI ունեցող սննդի աղբյուրներն են ամբողջական հացահատիկից պատրաստված հացերը, մակարոնեղենը, որոշակի մրգեր և կաթնամթերք [77]:

Գլիկեմիկ ծանրաբեռնվածությունը (GL) գլիկեմիայի արձագանքի կանխատեսման մեկ այլ եղանակ է, որը հաշվի է առնում սննդի GI-ը և չափաբաժնի մեծությունը [78]: Այս մեթոդի արդյունավետությունը չի գնահատվել տիպ 1 շաքարային դիաբետով երեխաների կամ մեծահասակների շրջանում:

Սննդակարգային խորհուրդները ինսուլինոթերապիայի որոշակի ռեժիմների դեպքում

Ավանդական թերապիա

- Օրական երկու անգամ կարճատև և երկարատև ազդեցության ինսուլինի ներարկման ռեժիմը պահանջում է ածխաջրերի ընդունման ամենօրյա հետևողականություն (հաճախ երեք հիմնական սննդի ընդունում, ընթացքում հավելյալ սնունդ [snacks])՝ հավասարակշռելու ինսուլինի ազդեցության պրոֆիլը և կանխարգելելու հիպոգլիկեմիան ինսուլինի ազդեցության պիկերի ժամանակ [55]:

- վերոհիշյալ ռեժիմի դեպքում ներարկման ժամերին ընդունած ածխաջրերի քանակը կարող է փոփոխվել, եթե հիվանդը/ընտանիքը կարող է կարգավորել կարճատև/արագ ադող ինսուլինի դեղաչափը ընդունած ածխաջրերին համապատասխան [79]:

Կլինիկական փորձը ցույց է տալիս, որ պրեպրանդիալ և պոստպրանդիալ գլիկեմիայի որոշումը օգնում է որոշել ինսուլինի դեղաչափի փոփոխությունների ճշտությունը:

- Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ընդհանուր էներգիայի/ածխաջրերի ընդունման քանակներին, հիմնական և հավելյալ սննդի ընդունման ժամերին՝ գլիկեմիայի օպտիմալ հսկողության և ավելորդ քաշի կանխարգելման համար:
- Ավանդական ռեժիմներից շատերը պահանջում են ածխաջրերի ընդունում քնելուց առաջ գիշերային հիպոգլիկեմիայի կանխարգելման համար:

Ամենօրյա բազմակի ներարկումների (MDI) թերապիա և պոմպեր

Ինտենսիվ ինսուլինոթերապիայի դեպքում երեխաների և դեռահասների համար մոտեցումը ավելի ճկուն է, օգտագործվում են անհատականացված ICR-ներ, որոնք թույլ են տալիս ինսուլինի դեղաչափը համապատասխանեցնել ածխաջրերի ընդունմանը: Այս մոտեցումը խրախուսվում է մի շարք միջազգային կոնսենսուսային ուղեցույցներով [1-4, 6]: ICR-ի ճշգրտությունը գնահատելու համար անհրաժեշտ է պրեպարանդիալ և պոստպրանդիալ (2-3 ժամ հետո) գլիկեմիայի որոշում: Նախնական գործակցի հաշվարկի համար օգտագործվում է «500-ի կանոն»-ը է, թեև այլ մեթոդներ ևս օգտագործվում են (տես «Ինսուլինոթերապիա» գլուխը):

Այս մոտեցումը մեծացնում է ճկունությունը՝ թույլ տալով ավելի բազմազան սննդի ընդունում տարբեր ժամերի՝ նվազեցնելով հավելյալ սննդի ընդունումների (snacks) անհրաժեշտությունը, ընձեռելով սննդի ընդունման ժամերի ավելի ազատ ընտրություն:

Պոմպային ինսուլինոթերապիան ընձեռում է առավելագույն ճկունություն սննդի ընդունման ժամերի և ածխաջրերի քանակների հարցում:

- երբ MDI-ի և պոմպային ինսուլինոթերապիայի ժամանակ օգտագործվում է ICR-ը անհրաժեշտ է հսկել որ սննդակարգի ընդհանուր որակը չընկնի [63]:
- ճկունությունը չպետք է նշանակի լիովին ազատություն՝ առանց հաշվի առնելու առողջ սննդի սկզբունքները և սննդի ընդունման ժամանակացույցը [9]:

Բոլորսային ինսուլինի հաշվիչների օգտագործումը MDI-ի և պոմպային ինսուլինոթերապիայի ժամանակ օգնում է հաշվարկել ինսուլինի դեղաչափը և բարելավել պոստպրանդիալ գլիկեմիան [86, 87]:

Արագ ազդող ինսուլինի անալոգները սովորաբար ներարկվում են այս ռեժիմներում անմիջապես ուտելուց առաջ՝ պոստպրանդիալ տատանումները [88] և մոռացվելու հավանականությունը [89] նվազեցնելու համար: Սննդի հավելյալ ընդունումները առանց բոլորսային ինսուլինի ներարկման դեռահասների շրջանում հաճախ հանդիպող երևույթ է և վատացնում է գլիկեմիայի հսկողությունը [90]: Ինսուլինի ներարկումը ուտելուց հետո [91] և հաճախակի հավելյալ սննդի ընդունումները [9] նույնպես վատացնում են գլիկեմիայի հսկողությունը:

- MDI դեպքում որոշ կենտրոնների կլինիկական փորձը խորհուրդ է տալիս ներարկել կարճատև ազդեցության (ռեգուլյար/լուծելի) ինսուլին, երբ ցանկալի է երկարաձգել ինսուլինի ազդեցությունը որոշ կերակուրների դեպքում (օրինակ, բարձր յուղայնությամբ, ածխաջրերով հարուստ կերակուր): Պրեպրանդիալ և պոստպրանդիալ գլիկեմիայի որոշումը կօգնի գնահատել այս ռեժիմը:

- Պոմպային թերապիայի առավելություններից մեկն այն է, որ պրանդիալ ինսուլինի մատակարարումը համապատասխանեցվում է անհատական սննդակարգին: Սա հնարավորություն է ընձեռում սննդային բոլորսը համապատասխանեցնել ճաշի գլիկեմիկ ազդեցությանը (ցածր GI և/կամ բարձր յուղայնություն կամ բարձր սպիտակուցի պարունակություն): Բարձր յուղայնությամբ, ածխաջրերով հարուստ սննդի համար (օրինակ՝ պիցցա), կրկնակի ալիքով բոլորսը առավել կհամապատասխանի պոստպրանդիալ գլիկեմիայի տատանումներին [92, 93]: Բացի այդ, հաստատված է, կրկնակի ալիքով սննդային բոլորսի կիրառումը ցածր GI-ով սննդից առաջ զգալիորեն նվազեցնում է պոստպրանդիալ գլիկեմիայի տատանումները [94]:

- գլյուկոզայի շարունակական մոնիտորինգի համակարգերը կարող են օգնել համապատասխանեցնել ինսուլինը ի պատասխան տարբեր ճաշատեսակների գլիկեմիայի տատանումներին [95]:

- սովորաբար բոլորսային ինսուլինը հաշվարկվում է անհատական ICR-ի միջոցով: Այնուամենայնիվ, կան ապացույցներ, որ այլ մակրոսնուցիչների ազդեցությունը (ճարպ եւ սպիտակուց) պետք է հաշվի առնել բոլորսային ինսուլինի դեղաչափի որոշման ժամանակ [50, 52, 53, 96]:

Երեխաների և մեծահասակների շրջանում վերջերս կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ինտենսիվ ինսուլինոթերապիայի դեպքում երեխաների սպիտակուցով կամ ճարպով հարուստ սննդի օգտագործումը հանգեցնում է հետաձգված հիպերգլիկեմիայի [53, 96]: Ինչը ընդգծում է ինսուլինի դեղաչափերը հաշվարկելիս ներկայիս ածխաջրերի վրա հիմնված ալգորիթմների սահմանափակումները: Առաջարկվում է հաշվարկել նաև ճարպի և սպիտակուցի քանակները՝ պոստպրանդիալ տատանումները նվազեցնելու համար [97, 98]:

Խորհուրդներ ըստ տարիքային խմբերի

Փոքր երեխաներ

- Այս տարիքային խմբի երեխաները ունեն փոփոխական ախորժակ: Կանոնավոր, փոքր քանակներով սննդի ընդունումները

օրվա ընթացքում, նպաստում են ավելի լավ գլիկեմիկ վերահսկողությանը և սննդային պահանջների բավարարմանը: Անհրաժեշտ է խուսափել երեխային անընդհատ կերակրելուց, քանի որ դա կարող է հանգեցնել հիմնական սննդի ժամին սննդից հրաժարվելուն, ինչպես նաև դժվարելցնել գլյուկոզայի ցուցանիշների վերծանումը:

- Պոմպային ինսուլինոթերապիան կարող է օգտակար լինել երեխայի սննդային վարքագիծը կառավարելու հարցում [8, 100]: Նախընտրելի է կատարել ինսուլինի բոլոր ուտելուց առաջ: Սակայն անկանոն սնվելու կամ նոր կերակրատեսակների ներմուծման դեպքում կարելի է նաև բաժանել բոլորը՝ ներարկել և ուտելուց առաջ և ընթացքում:

- անհրաժեշտ է խրախուսել սննդի համային, գունային և կառուցվածքային բազմազանությունը:

- Սննդակարգի վերաբերյալ ծնողական անհանգստությունը շատ տարածված է այս տարիքային խմբում և ինսուլինոթերապիայի ռեժիմը որոշելիս անհրաժեշտ են հատուկ մոտեցումներ: Յերեկային խնամք իրականացնողներին անհրաժեշտ է ուսուցանել թե ինչպես վերահսկել դիաբետը:

Դպրոցական երեխաներ

Իդեալական պայմաններում դպրոցում երեխան պետք է ունենա սննդի հիմնական և հավելյալ (snack) ընդունում: Երեխան պետք է սկսի հաշվարկել ածխաջրերի քանակությունը՝ մեծահասակների օգնությամբ և վերահսկողությամբ[67]:

- անհատական խորհրդատվություն է անհրաժեշտ հիպոգլիկեմիան կանխելու նպատակով ածխաջրերի ընդունման վերաբերյալ՝ հատկապես այնպիսի դպրոցական միջոցառումների ժամանակ, ինչպիսիք են սպորտային օրերը, էքսկուրսիաները և ճամբարները: Դա անհրաժեշտ չէ երեխայի սովորական ակտիվ խաղի պարագայում:
- Առողջ սննդի ընտրության, սննդի չափաբաժինների և ֆիզիկական ակտիվության վերաբերյալ խորհրդատվությունը շատ կարևոր է ավելցուկային քաշի կանխարգելման և սիրտանոթային հիվանդությունների ռիսկերի նվազեցման համար:
- անհրաժեշտ է խորհրդատվություն երեխայի տնից դուրս գիշերակացի և հավաքույթների վերաբերյալ:
- Դպրոցի անձնակազմը պետք է ըմբռնումով մոտենա և որոշակի ուսուցում ստանա ՇԴ վերաբերյալ:

Դեռահասներ

Այս տարիքային խմբում հաճախակի հանդիպող վարքագծային խնդիրներն են մինչև ուշ դրսում լինելը, ուշ զարթնելը, ինսուլինի ներարկումների բաց թողումը, սննդակարգի խախտումները, որոշ երկրներում ակոհոլի օգտագործումը: Շեշտը պետք է դրվի ընտանեկան միջավայրում առողջ սննդակարգին հետևելու. ինչպես նաև կեսօրին և երեկոյան մեծ ծավալով հավելյալ սննդի ընդունումներից խուսափելու վրա:

Ինսուլինային ռեժիմը պետք է համապատասխանի դեռահասի փոփոխական գրաֆիկին՝ ներառյալ դպրոցը, ֆիզիկական ակտիվությունը, աշխատանքային գործունեությունը:

Անհրաժեշտ է հետևել քաշին խուսափելու համար ինչպես քաշի կորստից, այնպես էլ քաշի ավելացումից.

- քաշի ավելացումը պահանջում է ինսուլինի դեղաչափի, սննդի ընդունման, գլիկեմիկ հսկողության և ֆիզիկական ակտիվության մանրակրկիտ վերանայում:
- Քաշի կորուստը կամ քաշի ավելացման անկարողությունը կարող է կապված լինել քաշի վերահսկման համար ինսուլինի ներարկումներից խուսափելու, խանգարված սննդային

վարքագծի կամ սննդակարգի հետ (տես ստորև): Բարձր HbA1c- ի դեպքում անկախ քաշից, անհրաժեշտ է գնահատել սննդակարգը:

Անհրաժեշտ է խորհրդատվություն կապված հավաքույթների, արձակուրդների, հասակակիցների կողմից ոչ կանոնակարգված սնվելու դրդումների, որոշ դեպքերում ալկոհոլի անվտանգ օգտագործման և ուշացած հիպոգլիկեմիայի ռիսկի վերաբերյալ:

Սննդակարգի փոփոխությունները սպորտի և ֆիզիկական ակտիվության ժամանակ

Շաքարային դիաբետ ունեցող երեխաները և դեռահասները պետք է խրախուսել ունենալ կանոնավոր ֆիզիկական ակտիվություն, քանի որ այն նպաստում է սիրտանոթային առողջության պահպանմանը և նպաստում է քաշի կառավարմանը:

Տիպ 1 դիաբետ ունեցող երիտասարդների շրջանում հիպոգլիկեմիայի ամենատարածված պատճառն է պլանավորված կամ չպլանավորված ֆիզիկական ակտիվությունը: Այնուամենայնիվ ինտենսիվ վարժությունները կարող են հանգեցնել հիպերգլիկեմիայի, իսկ ավելի ուշ՝ հիպոգլիկեմիայի:

Կանոնավոր ֆիզիկական ակտիվությամբ զբաղվող երեխաները և երիտասարդները ունեն նույն սննդային պահանջները, ինչ և առանց ՇԴ իրենց հասակակիցները:

Սննդակարգը պետք է նպաստի աճին և համապատասխանի տվյալ սպորտաձևի պահանջներին[101]: Էներգիայի և ածխաջրերի պահանջները տարբերվում են կախված վարժությունների տիպից, ինտենսիվությունից և տևողությունից ինչի պատճառով անհրաժեշտ է անհատական մոտեցում:

Եթե վերահսկողությունը վատ է [$U^{\text{A}} > 14$ մմ / լ (250 մգ / դլ) կամ առկա են կետոններ], ապա անհրաժեշտ է հետաձգել վարժությունները մինչև, որ ինսուլինի միջոցով ավելի լավ վերահսկողություն կապահովվի:

Չպլանավորված ակտիվություն

Հիպոգլիկեմիան սովորաբար կապված է լինում չպլանավորված ֆիզիկական ակտիվության հետ: Կախված վարժությունների տևողությունից և ինտենսիվությունից,

հիպոգլիկեմիան կարող է առաջանալ վարժությունների կատարման ընթացքում կամ հետո՝ ինսուլինի հանդեպ զգայունության բարձրացման և մկանների վերականգնման շրջանում: Անհրաժեշտ է ունենալ արագ ներծծվող ածխաջրերի պաշար՝ հեշտությամբ հասանելի ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ:

- Եթե կարճաժամկետ ակտիվության ժամանակ անհրաժեշտ է հավելյալ ածխաջուր, ապա ամենաարդյունավետն են համարվում արագ ներծծվող ածխաջրերը ըմպելիքի տեսքով:
